



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ
kotayk@mfa.gov.am

02.10.2013թ. N-----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի ուսուցիչներ

Ջերմորեն շնորհավորում եմ Ուսուցչի օրվա կապակցությամբ և մաղթում, որ այս յուրահատուկ տոնը պարզևի Ձեզ անսահման բերկրանք ու բարձր տրամադրություն:

Հարկ է նշել, որ ուսուցչի բացառիկ կերպարը մշտապես առկա է յուրաքանչյուրիս վառ հիշողություններում, քանզի Դուք եք եղել բազմաթիվ անվանի մարդկանց ներշնչանքի աղբյուրն ու կյանքի ճշմարիտ ուղղու ըմբռնման ուղեցույցը, ուստի ցանկանում եմ Ձեզ բարեկեցություն, բաջառողջություն և ամենայն բարիք:

Տոնական այս օրվա շրջանակներում պետք է ընդգծենք նաև ուսուցչի գործունեության նկատմամբ պետական հոգածության առանցքային դրսևորումներն ու վստահաբար նշենք, որ այդ ամենն այսուհետ ևս լինելու է շարունակական:

Դարձյալ շնորհավորում եմ մասնագիտական տոնի առթիվ՝ բարեմաղթելով Ձեզ լավատեսություն և տոկունություն:

Հարգանքներով

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ